«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀԱՆԴԵՍ

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը ազդարարում է «Հայագիտական հետազոտություններ» հանդեսի ծնունդը: Այն գրախոսվող պարբերական է, որի նպատակն է շրջանառել բարձրորակ հայագիտական աշխատանքներ (հաշվետվություններ, հետազոտություններ, տեսական-մեթոդաբանական հոդվածներ): Թեմատիկ, ժամանակագրական, էջաքանակային և նկարային սահմանափակումներ չկան:

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG), ծավալը՝ մինչև 10 էջ: Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են հոդվածներ նաև ռուսերեն և եվրոպական լեզուներով: Հոդվածները պետք է ունենան հստակ կառուցվածք՝ նախաբան, բուն տեքստ (հնարավորինս շատ ենթավերնագրերով), եզրակացություն, ռեզյումե (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն, այլ լեզվի դեպքում՝ հայերեն, մոտ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Arial Unicode, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman :
2. Տառաչափը՝ 12, տողերի միջև՝ 1.5 :
3. Գծանկարները, սև-սպիտակ կամ գունավոր լուսանկարները ներկայացնել տեքստում որպես հաջորդական նկարներ (Նկ. 1, 2, 3…):
4. Գծանկարների և սև-սպիտակ լուսանկարների խտությունը պետք է լինի ոչ պակաս քան՝ 600, գունավոր նկարներինը՝ 300 dpi:
5. Հղումը՝ տեքստի մեջ փակագծերում.

- **Արխիվային նյութեր** (Վերնագիր, 1920,ՀԱԱ, ֆ.199, ց. 1, գ. 10, թ. 12-13:):
- **Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ** (Արամը…,1991, էջ 12-13:):
- **Հուշագրություններ և ուսումնասիրություններ** (Սիմոնյան Հ.,2009, էջ 12-13:):
- **Մամուլ (**Վրացեան Ս.,1925,էջ 12-13:**): Հեղինակի Ա.Ա.Հ. բացակայության դեպքում գրել նյութի վերնագրի մի հատվածը** (Ազատագրական …, 1991,էջ 12-13:):

Իսկ համացանցային նյութերի ու ծանոթագրությունների հղումները, ինչպես նաև երկուսից ավելի հղում պարունակող նյութերը տանել տողատակ:

6. Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը տալ հոդվածի վերջում՝ նշելով հղված նյութի ամբողջական տվյալները:

Օրինակ՝

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Սկզբնաղբյուրներ

ա.Արխիվային նյութեր

Հայերեն

1.1. Հեղինակի Ազգանունը Ա., Նյութի վերնագիրը - ՀԱԱ, ֆ.199, ց. 1, գ. 10:

(Հեղինակի կամ վերնագրի տվյալներից մեկի բացակայության դեպքում գրել առկա տվյալը):

բ.Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1.2. «Արամը, մահուան յիսնամեակին առթիւ», Երեւան, Միքայէլ Վարանդեան հրատ., 1991:

2. Հուշագրություններ և ուսումնասիրություններ

Հայերեն

2.1. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք 3-րդ,Երևան,ԵՊՀ հրատ.,2009:

3. Մամուլ

Հայերեն

3.1. Վրացեան Ս., Մեղադրանքներ եւ իրողութիւններ,«Դրօշակ» ամսագիր, N 2, Փարիզ, օգոստոս, 1925:

4. Համացանցային նյութեր

4.1. Հովհաննիսյան Պ., Հայկական հարցի և ցեղասպանության մատենագիտության պատմության համառոտ ակնարկ - http://www.armin.am/images/menus/548/P_Hovhannisyan.pdf :

ՀՀՀ-ի խմբագրություն

- Գլխավոր խմբագիր՝ Արամ Սիմոնյան
- Պատասխանատու քարտուղար՝ Վարուժան Պողոսյան
- Խմբագրական խորհուրդ՝ Արամ Սիմոնյան, Աշոտ Մելքոնյան, Էդիկ Մինասյան, Ալիկ Ղարիբյան, Ալեքսանդր Սաֆարյան, Լուսինե Սահակյան, Հայկ Ավետիսյան, Միեր Հովհաննիսյան, Հրաչիկ Բայրամյան, Արծրուն Ավագյան, Ռուբեն Սաքապետոյան, Յուրա Ավետիսյան, Սամվել Մուրադյան, Լիանա Հովսեփյան, Սեյրան Զաքարյան, Ալբերտ Ստեփանյան:

Հոդվածները ներկայացնել՝

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 7-րդ հարկ, 701 սենյակ, (handes@armin.am) :